

Կեանքէն աւելի պատուական բան չկայ, բայց ասոնցմէ աւելի անարգ ոչինչ կայ մոլիներուն աչքերուն, որոնք անվայել բաներու համար ապարդիւն կը վատնեն իրենց կեանքը:

Վասնզի սնափառը կեանքը կը վտանգէ փառքի համար, ազահը՝ ունեցածին, բղջարտահը՝ հեշտանքին, որսակալը՝ վրէժխնդրութեան:

Ասոնք իրապէս կեանքէն կը զրկուին, որովհետեւ անոր յարգը չեն գիտեր:

Չկայ մէկը, որ բան մը չսիրէ եւ չի յուսայ՝ որ անոր մէջ իրականան իր բաղձանքները: Քանզի սիրոյ եւ յոյսի նպատակը բաղձանքներու իրականացումն է: Ուստի Բարիններն ու չարերը ունին բաներ, որոնք կը սիրեն եւ որոնց վրայ յոյս կը դնեն եւ որոնցմէ կ'ակնկալեն ստանալ իրենց ցանկացած եւ յուսացած բաներու իրականացումը՝ իբրեւ իրենց սիրոյ եւ յոյսի վարձք եւ փոխ հատուցում:

Այդ անձերը կը սիրեն զԱստուած եւ յոյս կը դնեն իր վրայ, ուստի Աստուծոմէ իրենց պարգեւը իբրեւ վարձք՝ յաւիտենական հանգիստն է: Իսկ չարերը կը սիրեն այս աշխարհը եւ յոյսը կը դնեն աշխարհի ինչքերուն վրայ, ուստի աշխարհէ ելած ժամանակ Աստուծոմէ անվարձք կը մնան, որովհետեւ ինչ որ կը սիրէին եւ ինչի վրայ որ յոյս դրած էին, մնաց այնտեղ՝ աշխարհի վրայ: Քանզի այս աշխարհը չի կրնար զինք սիրողները հանդերձեալ կեանքի մէջ վարձատրել. սակայն բարիներուն սիրած Աստուածը, որ երկինքի ու երկրի տէրն է, բարիներուն բաղձանքները կը կատարէ՝ նոյն ինքն դառնալով հանդերձեալի հանդէպ անոնց սիրոյ ու յոյսի վարձքը:

ՈԳԵՀԱՐՑՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԳԱՒԱԹ ԴԱՐՉՆԵԼ

«Կը հաւատայինք, որ Աստուած գիտէ մեր փնտռողներուն մասին, եւ այստեղ, այս բնակարանին մէջ մեզի պիտի յայտնուի եւ ըսէ՝ թէ ինչ ուժի միջոցաւ է որ կը շարժի գաւաթը: Բայց մեզի վիճակուած էր՝ այդ մասին ուրիշ միջոցաւ իմանալ, քան ինչ որ կը կարծէինք: Անգամ մը ես ու կինս փորձեցինք առանձին հարցում ընել: Կատարի պայքար մը սկսաւ: Մենք կը մերժէինք բոլոր եկած ոգիները, եւ կ'ուզէինք հասկնալ՝ թէ ո՞վ է մեզի հետ խօսողը: Այն ատեն գաւաթը սկսաւ ահաւոր արագութեամբ դառնալ ու շրջաններ ընել, այնպէս՝ որ կը ցրուէր եւ դարձեալ կը հաւաքէր տառերը: Մենք մերժեցինք խաւար ուժերուն հետ խօսիլ, եւ ճշմարտութեան ոգին կանչեցինք: Իսկ եթէ անիկա Սատանային գործն է, -ըսինք,- աւելի լաւ է որ չպատասխանէ: Ի վերջոյ կարդացինք. «Աստուծոյ պատգամաբերը»:

«Ոգին սկսաւ պատասխանել նոյն մեր չըրած հարցումներուն: Քանի տակաւին մեր մտքերուն մէջ կը կասկածէինք, թէ իսկապէ՞ս ոգին Տիրոջ դեսպանն է, մեզի ըսաւ. «Անվախօրէն հաւատացէ՛ք, Աստուած գիտի ինչ է: Կ'ուզէ ինքզինք ձեզի յայտնել, որովհետեւ ճշմարտօրէն զինք կը փնտռէ: Աստուած որուն ինչպէս որ ուզէ՝ կը յայտնուի»:

Յետոյ ոգին ըսեք էր, որ իրենք Աստուծոյ գործին մասին,...

Շարունակելի



ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 17.1-10

Դ.ՅԻՍՆԱԿԻ

Յիսուս իր աշակերտներուն ըսաւ. «Գայթակղովթիւններ անպայման որ պիտի պատահին, բայց վա՛յ այն մարդուն, որուն ձեռքով ուրիշներ գայթակղովթեան մէջ կ'իյնան: Նախընտրելի պիտի ըլլար որ իր վզին ջաղացքի քար անցընէին եւ զինք ծովը նետէին, քան թէ այս փոքրիկներէն մէկը գայթակղեցնէր: Հետեւաբար, զգուշացէ՛ք: Եթէ եղբայրդ մեղք գործէ՝ յանդիմանէ զինք, եւ եթէ զղջայ՝ ներէ իրեն: Նոյնիսկ եթէ մէկ օրուան մէջ եօթն անգամ քեզի դէմ մեղանչէ եւ եօթն անգամ քեզի գալով ըսէ՝ կը զղջայ, պէտք է ներես իրեն»:

Առաքեալները ըսին Տիրոջ. «Աւելցո՛ւր մեր հաւատքը»:

Յիսուս ըսաւ. «Եթէ մանանեխի հատիկին չափ հաւատք ունենաք եւ ըսէք այս թթենիին, «արմատախիլ եղիր եւ ծովուն մէջ տնկուէ՛», վստահ եղէ՛ք որ պիտի հնազանդի ձեզի»:

Ենթադրենք որ ձեզմէ մէկը ծառայ մը ունի, որ հողագործ է կամ հովիւ: Երբ ծառան դաշտէն դառնայ եւ տուն մտնէ, տէրը իրեն կ'ըսէ՝ «Անմիջապէս գնա՛, ճաղկեր»: Բնականաբար՝ ո՛չ: Ընդհակառակը, անոր կ'ըսէ. «Ընթրիքս պատրաստէ՛ եւ գոգնոցը կապելով սպասարկէ՛ ինձի, մինչեւ ընթրիքս վերջացնեմ. անկէ ետք կրնաս ուտել ու խմել»: Կը կարծէ՞ք որ տէրը իր ծառային երախտապարտ պէտք է ըլլայ իր հրահանգները կատարելուն համար: Չեմ կարծեր: Դուք ալ նոյնպէս, երբ կը կատարէք ինչ որ հրամայուած է ձեզի, ըսէ՛ք. «Անպիտան ծառաներ ենք, ինչ որ պարտաւոր էինք ընել՝ կատարեցինք»:

«Եթէ մանանեխի հատիկին չափ հաւատք ունենաք եւ ըսէք այս թթենիին, «արմատախիլ եղիր եւ ծովուն մէջ տնկուէ՛», վստահ եղէ՛ք որ պիտի հնազանդի ձեզի»:

Հաւատք ունի՞նք Քրիստոսի հանդէպ. եւ նախ քան այս հարցումը, նախ հարց տանք մենք մեզի. Կը ճանչնա՞նք Քրիստոսը: Քրիստոսը ճանչնալու եւ Անոր հաւատալու միակ աղբիւրը Աստուածաշունչն է: Մեր հոգեւոր ծարաւը յագեցնենք Աստուածաշունչ մատեանը կարգալով:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

Ս. ՅԱԿՈՒԲ ՄԾԲՆԱՅ ՀԱՅՐԱՊԵՏ



Մեր Եկեղեցւոյ ամենէն աւելի ժողովրդականութիւն ունեցող սուրբերէն մէկն է Սուրբ Յակոբ Մծբնացի հայրապետ: Իր սօնը կանուխէն հաստատուած է Առաքելական Եկեղեցւոյ սօնացոյցին մէջ ու կը սօնուի ամէն տարի Դեկտեմբեր ամսուան կէսերուն եւ միշտ շաբաթ օրով կը գուգադիպի:

ՍՈՒՐԲ ՅԱԿՈՒԲԻ ԿԵԱՆՔԸ

Սուրբ Յակոբ ծնունդով ասորի էր եւ հօրաքրոջ որդին Ս. Գրիգոր Լուսաւորիչին: Անոնք միասին դաստիարակուած էին Կեսարիոյ մէջ:

Ան իր քարոզներով, հրաշագործութեամբ եւ նգնաւորի իրիստ կեանքով նշանաւոր եղած է: Մասնակցած է 325 թուականին Նիկիոյ մէջ կայացած Տիեզերական Առաջին ժողովին:

Մծբնի աթոռին համար եպիսկոպոս ձեռնադրուած է, որ Աստուած տեսիլքի մը մէջ յայտնած էր Մարուգէ նգնաւորին:

Գրած է վարդապետական նաոներ, բարոյախօսական գրութիւններ եւ մատենագրութեան մէջ ծանօթ «Զգօն» գիրքը:

Ս. Գրիգոր Նարեկացին ներքող մը նուիրած է Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետին: «Յաղթող եւ Սուրբ Հայրապետ» շարականը նուիրուած է Ս. Յակոբին: Այս շարականը գրուած է այն դէպքին առթիւ, ուր կը պատմուի թէ Պարսից Շապուհ Բ. Թագաւորը աշխարհաժաւալ իր արշաւանքներու ընթացքին կը հասնի Մծբն: Այն ատեն սուրբը կ'աղօթէ, եւ ահա պիծակներու եւ ձիաստացներու մեծ բազմութիւն մը կը յարձակի Պարսիկներու ձիերուն վրայ եւ անոնք խուճապի մատնուելով ձիերը կը փախչին, իսկ գինուորները հետիոտն կը նահանջեն: Ս. Ներսէս Շնորհալի հայրապետ այս շարականը ձօնած է մեծ սուրբին:

«ՀԱՐՅՈՒՄ - ՊԱՏԱՍԻԱՆ»

ԲԱԺԻՆ

ԳԻՏԷԻՐ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

ԱՆՈՒՆՆԵՐԸ

- 1.- Գիշերային ժամերգութիւն:
- 2.- Առաւօտեան ժամերգութիւն:
- 3.- Արեւազալի ժամերգութիւն:
- 4.- Ճաշու ժամերգութիւն:
- 5.- Երեկոյեան ժամերգութիւն:
- 6.- Խաղաղական ժամերգութիւն:
- 7.- Հանգստեան ժամերգութիւն:

Վստահաբար կը փափաքիք՝ իւրաքանչիւր ժամերգութեան բացատրութիւնը ունենալ: Անպայման կը խոստանանք յառաջիկայ թիւերուն մէջ, մէկ առ մէկ բացատրել ձեզի՝ բոլոր ժամերգութիւններուն մասին:

ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ ԱՂՕԹՔԻ ՄԱՍԻՆ

Շաբաթ եւ Կիրակի օրերը հաւասարապէս եկեղեցի գացէ՛ք, որովհետեւ շաբաթ օրը սօճն է սուրբ մարտիրոսներուն, որոնք Աստուծոյ սիրոյն իրենց անձը մահուան յանձնեցին եւ անտանելի չարչարանքներով նահատակեցան, եւ եկեղեցի երթալով ու անոնց չարչարանքները լսելով մասնակից կ'ըլլանք սուրբերու փառքին: Կիրակի ալ Քրիստոսի յարութեան օրն է, եւ մեր բոլորին յարութիւնը Կիրակի պիտի ըլլայ, երբ Աղամէն ետք բոլոր մեռելները յարութիւն պիտի առնեն: Աստուծոյ դատաստանը եւս Կիրակի պիտի ըլլայ, երբ արդարներն ու մեղաւորները իրենց գործին փոխարէնը պիտի ստանան Աստուծոյ արդար դատաստանէն: Ասոր համար սուրբ առաքեալներն ու հայրապետները սահմանած են որ Կիրակի օրերը մարմնական գործեր չկատարենք՝ եկեղեցի երթանք, Աւետարանի ձայնը լսենք, պատարագ տեսնենք, շաբթուան յանցանքները խոստովանինք. այլապէս՝ անէծք ու նզովք դրած են անոնց համար որոնք Կիրակի օր Աւետարանի ձայնը չեն լսեր: Սուրբ առաքեալները եւ իւղաբեր կիները Կիրակի օր տեսան Տէրը եւ բոլոր արդարները Կիրակի պիտի տեսնեն զՔրիստոս:

Արդ, ան որ սորվի եւ Կիրակի եկեղեցի երթայ ու պատարագ տեսնէ, Աւետարանի ձայնը լսէ եւ խոստովանութեամբ սրբուի իր մեղքերէն, ան արժանի կ'ըլլայ Քրիստոսի տեսութեան եւ երանաւէտ ձայնին, որ կ'ըսէ. «Եկէ՛ք Հօրս օրհնածներ, ժառանգեցէ՛ք արքայութիւնը» (Մատ. 25.4):

ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

ՃՇՄԱՐԻՏ ՀԱՄԵՍՏՈՒԹԻՒՆԸ

Ու որ որ անձը ԿԸ ԽՈՆԱՐՇԵՅՆԵ ՊԻՏՆ ԲԱՐՁՐԱՆԱՅ: (Մտթ 23:12):

Խոնարհութեան կամ համեստութեան համար աղօթելը եւ խոնարհ կեանք մը ապրելը բոլորովին տարբեր բաներ են: Խոնարհ կեանք ապրելու մեր փափաքը կրնայ մղել մեզ ծառայութիւններ մատուցանելու՝ երբ որ պատեհութիւններ ներկայանան. բայց ծառայութեան կեանք մը կրնայ առաջադրել հպարտութեան: Հեղինակ եւ դասախօս անձ մը՝ այս նկատողութիւնը արձանագրած է. «Մենք կը փափաքինք ձեզի ձգել խոնարհութիւնը եւ երբ ստանանք գայն՝ յանկարծ կը կորսնեցնենք մեր մատներուն մէջէն»:

Ուրեմն, ի՞նչպէս կրնանք գիտնալ թէ ե՞րբ իրապէս խոնարհ կամ համեստ ենք: Չենք կրնար գիտնալ, բայց երբ ուրիշներուն ծառայելը կ'ըլլայ երկրորդ բնութիւն մեզի համար՝ հետեւած կ'ըլլանք Յիսուսի խօսքին, որ կը գտնուի Մատթէոսի աւետարանին 23-րդ գլուխին մէջ: Մատնանշելէ ետք, թէ դպիրները եւ փարիսեցիները կը ձգտէին դիրք եւ համբաւ շահելու, Յիսուս ըսաւ. «Ան որ իր անձը կը խոնարհեցնէ՛ պիտի բարձրանայ» (համար 12):

Օգտակար կը նկատենք տալ օրինակ մը: Ծերակուտական մը իր պատկանած եկեղեցիին Ս. Գրոց սերտողութեան պահերուն կը մասնակցէր ուրիշ քաղաքացիներու եւ այլ կարեւոր անձնաւորութիւններու հետ: Սերտողութեան աւարտին ամէն մարդ կ'առաջադրէր մեկնելու, բայց ծերակուտականը կը մնար հոն՝ աթոռները եւ սեղանները տեղաւորելու:

Երբ ծառայութիւնը մեր սրտէն կը բխի որպէս արտայայտութիւն գութի՝ կ'առնենք խոնարհութեան մէջ: Մենք չենք գգար թերեւս, բայց Աստուած գիտէ եւ կը գնահատէ:

**ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԵՆ
38.1-8**

Այն օրերուն Եզեկիա թագաւոր հիւանդացաւ եւ մահուան անկողին ինկաւ: Եսայի մարգարէն, Ամուսի որդին, անոր բով եկաւ եւ ըսաւ. «Տէրը այսպէս կ'ըսէ.– Բու տանդ համար կարգադրութիւն ըրէ՝ յաջորդդ նշանակելով, որովհետեւ կեանքիդ օրերը վերջացած են եւ մահդ մօտ է»:

Եզեկիա երեսը պատին դարձուց եւ այսպէս աղօթեց Տիրոջ. «Կ'աղաչեմ, ո՛վ Տէր, յիշէ թէ արդար եւ ուղղամիտ եղայ բու աչքիդ, եւ ըրի միայն այն ինչ որ հանելի է քեզի»: Եւ Եզեկիա դառնօրէն լացաւ:

Այն ատեն Տէրը հրամայեց Եսայի մարգարէին, ըսելով. «Գնա՛ եւ Եզեկիային ըսէ.– Այսպէս կ'ըսէ Տէրը, բու հօրդ՝ Դաւիթի Աստուածը. "Լսեցի աղօթքդ, տեսայ արցունքդ եւ ահա քեզի տասնըհինգ տարի եւս կեանք կու տամ: Այլեւ Ասորեստանի թագաւորին ձեռքէն պիտի ազատեմ թէ՛ քեզ եւ թէ՛ այս քաղաքը, Նրուսաղէմը, որ անձամբ պիտի պաշտպանեմ": Եւ որպէսզի գիտնաս թէ Աստուած իր խոստումը պիտի կատարէ, Տէրը հետեւեալ նշանը կու տայ քեզի: Տե՛ս, բու հօրդ՝ Աբագի արեւու ժամացոյցին ստուերը տասներորդ աստիճանին վրայ ինկեր է հիմա. բայց Տէրը գայն տասը աստիճան ետ պիտի դարձնէ»:

Եւ իրապէս, ստուերը իր ինկած տեղէն տասը աստիճան ետ գնաց:

**Շարունակել
Աստուածաշունչէն**

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿԸ
ԵՐԱՅԵՅԻՆԵՐՈՒՆ
1.1-14**

Անցեալին բազմաթիւ անգամներ եւ բազմաթիւ կերպերով Աստուած մեր հայրերուն խօսեցաւ մարգարէներուն միջոցաւ, իսկ այս վերջին օրերուն մեզի խօսեցաւ իր Որդիին միջոցաւ: Աստուած զինք ամէն բանի ժառանգորդ կարգեց եւ անոր միջոցաւ էր որ աշխարհը ստեղծեց: Որդին, Հօրը փառքին լոյսը եւ անոր էութեան նշգրիտ պատկերը, որ իր անձով մեր մեղքերը սրբել ետք երկինքի մէջ նստաւ Աստուծոյ՝ Գերագոյն Զօրութեան աջ կողմը:

Անիկա շատ աւելի բարձր է հրեշտակներէն, ինչպէս Աստուծմէ իրեն տրուած անունը ցոյց կու տայ. որովհետեւ ո՞ր մէկ հրեշտակին Աստուած ըսաւ. «Դուն իմ որդիս ես, այսօր քեզ ծնայ»: Կամ որո՞ւ ըսաւ. «Ես անոր հայր պիտի ըլլամ եւ անիկա՝ ինծի որդի»: Դարձեալ, երբ իր անդրանիկ Որդին աշխարհ կը դրկէր, ըսաւ. «Աստուծոյ բոլոր հրեշտակները թող պ ա շ տ ե ն գ ա յ ն » :

Աստուած իր հրեշտակներուն մասին խօսած ատեն կ'ըսէ. «Աստուած իր հրեշտակները ստեղծեց որպէս պատգամաւոր հոգիներ, եւ իր պաշտօնեաները՝ կրակի բոցի պէս»:

Մինչդեռ Որդիին կ'ըսէ. «Բու աթոռդ, ո՛վ Աստուած, յաւիտեանական է. արդարութեամբ կ'իշխես թագաւորութեանդ վրայ: Արդարութիւնը կը սիրես եւ անիրաւութիւնը կ'ատես»:

**ՀԱՐՈՒՆԱԿԵԼ
ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆԸ
ԱՍՏՈՒԱԾԱՇԱՀՈՒՆՉԷՆ**